ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ֆրանսիայի Հանրապետություն (Ստրասբուրգ)
2022 թվականի նոյեմբերի 27-ից 30-ը գործուղման

1. **<u>Անունը, ազգանունը</u>**
   Վաչե Տերտերյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը</u>**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները</u>**
   Ֆրանսիայի Հանրապետություն (ք.Ստրասբուրգ), 2022 թվականի նոյեմբերի 27-ից 30-ը

4. **<u>Հրավիրող կողմը</u>**
   Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական կոմիտե (CDDG)

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)</u>**
   Մասնակցություն Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 16-րդ հերթական նիստին

6. **<u>Քննարկված թեմաները</u>**
   Նիստի ընթացքում քննարկվել են՝

- ✓ Ժողովրդական լավ կառավարման սկզբունքների և խորհրդակցական ժողովրդավարության վերաբերյալ փաստաթղթերի մի շարք նախագծեր, մասնավորապես՝
  - ✓ Եվրոպայի Խորհրդի Բարձր մակարդակի վերլուծական խմբի զեկույցը,
  - ✓ Լավ ժողովրդավարական կառավարման սկզբունքների վերաբերյալ հանձնարարականի վերանայված նախագիծը:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>**
   Նիստի ընթացքում Կոմիտեն կարևորել է Հայաստանում իրականացվող տեղական ժողովրդավարության ամրապնդմանն ուղղված բարեփոխումները, համագործակցությունը Եվրոպայի խորհրդի հետ և բարեփոխումների հաստատակամությունն ու շարունակականությունը: Հատկապես գնահատվել է անդրսահմանային համագործակցության նախաձեռնությունը Հայաստանի և Վրաստանի միջև: Որպես լավագույն օրինակ մատնանշվել է «Անդրսահմանային համագործակցության առաջնորդության ակադեմիան», որը հնարավորություն է

ընձեռել ակտիվացնել շփումները Հայաստանի և Վրաստանի սահմանամերձ համայնքների տեղական իշխանությունների ներկայացուցիչների միջև՝ նպաստելով անդրսահմանային համագործակցության ամրապնդմանը:
Նիստի ընթացքում հանդես եմ եկել ելույթով և ներկայացրել ՀՀ տեղական ինքնակառավարման բարեփոխումների ընթացքը, վարչատարածքային բարեփոխումները, մասնակցային ժողովրդավարության բարելավմանն ուղղված մի շարք հարցեր և անդրսահմանային համագործակցությունը:
Առանձին հանդիպում եմ ունեցել Կոմիտեում Մալթայի ներկայացուցիչ, Մալթայի Խորհրդարանական քարտուղար՝ տեղական ինքնակառավարման համար պատասխանատու տիկին Էլիսոն Զերաֆա Սիվելիի հետ: Հանդիպման ընթացքում քննարկել ենք Հայաստանի և Մալթայի մարզերի և համայնքների միջև միջտարածաշրջանային համագործակցություն սկսելու մասին հարցեր:

8. **<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>**

Եվրոպայի խորհրդի Ժողովրդավարության և կառավարման հարցերով եվրոպական կոմիտեի 16-րդ նիստին հաստատվել է Կոմիտեի 2023 թվականի աշխատանքային պլանը, ընդունվել են քննարկված բոլոր նախագծերը:
Հաստատվել է նաև «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում, 2-րդ փուլ» (2022-2025 թթ.) ծրագիրը:

Մալթայի ներկայացուցչի հետ հանդիպման ընթացքում անդրադարձել ենք Հայաստանում տեղական ինքանակառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումների ընթացքին, կարևորել ենք փորձի փոխանակումը շահագրգիռ կողմերի միջև, ինչպես նաև քննարկել ենք պայմանավորվածություն ենք ձեռք բերվել հանդիպել առցանց ձևաչափով, որի ընթացքում միջազգային գործընկերներին սահիկաշարի միջոցով կներկայացվի Հայաստանի վարչատարածքային բարեփոխումները և անդրսահմանային համագործակցությունը:

9. **<u>Առաջարկություններ, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկներ՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները</u>**

Առաջարկվել է շարունակել ակտիվ համագործակցությունը ԵԽ գործընկերների հետ՝ տեղական բարեփոխումների ոլորտում լավագույն փորձի փոխանակման նպատակով:

10. **<u>Ստորագրություն, ամսաթիվ</u>**

02.12.2022 թ.